ՊԱՐԵՏԻ ՈՐՈՇՈՒՄ

28 մարտի, 2020 N 22

ՄԻ ՇԱՐՔ ՏՆՏԵՍԱՎԱՐՈՂՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԻՐԱՌՎՈՂ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելու մասին Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի մարտի 16-ի №298-Ն որոշման 2-րդ, 6-րդ և 7-րդ կետերով և որոշման հավելվածի 20-րդ կետով, հաշվի առնելով Պարետի՝ 2020 թվականի մարտի 20-ի №Ց/17-2020 ցուցումը և 2020 թվականի մարտի 27-ի №19 որոշումը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավարի 25.03.2020թ. N 492-Ա հրամանի հիման վրա ք.Վանաձոր, Մյասնիկյան 12 բ հասցեում գործող «ԱՐԹՈՒՐ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ» ՍՊԸ-ին պատկանող մթերային խանութում, 19.03.2020թ. N 215-Ա հրամանի հիման վրա ք. Սիսիան, Ն. Ադոնցի 5/1 հասցեում գործող Ա/Ձ «Մարատ Մկրտչյան»-ում և ք. Գորիս, Մաշտոցի 155/2 հասցեում գործող ԱՁ «Սամվել Ղուլունց»-ին պատկանող մթերային խանութում, 24.03.2020թ. N 437-Ա հրամանի հիման վրա ք. Երևան, Արտաշիսյան փող., 88/2 շենք (1-ին և 2-րդ հարկեր) և ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ միկրոշրջան, Արտեմ Միկոյան փող., 4 շենք հասցեում գործող «ԿՈՐՈՆԱ ՍՈԼԱՐԵ» ՍՊԸ-ին պատկանող մասնաճյուղերում, 22.03.2020թ. N 392-Ա հրամանի հիման վրա ք. Արմավիր, փող. Երևանյան 17/3 հասցեում գործող «ԱՐՏԱՎԱԶԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ՍՊԸ-ին պատկանող սուպերմարկետում, 22.03.2020.N 401-Ա հրամանի հիման վրա ք. Արմավիր, փող. Չարենցի 8/6 հասցեում գործող «ՄՇԵՑԻ ԽՈՐԵՆ» ՍՊԸ-ին պատկանող սուպերմարկետում, 28.03.2020թ. N 626-Ա հրամանի հիման վրա ք. Երևան, Վ. Վաղարշյան փողոց, 15/40 հասցեում գործող «Սիրանուշ Գևորգյան Պապիկի» ԱՁ-ում և ք. Երևան, Խորենացի 88 հասցեում գործող ««ԲԵԳՈՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ» ԱՁ»-ում 2020 թվականի մարտի 26-ին, 27-ին և 28-ին իրականացված մշտադիտարկումների արդյունքում կազմված արձանագրությունները՝

1. Վեց ժամով արգելել հետևյալ տնտեսավարողներին պատկանող մասնաճյուղերի (սուպերմարկետների) գործունեության ծավալումը՝

1) «ԱՐԹՈՒՐ ԿՈՍՏԱՆԴՅԱՆ» ՍՊԸ՝ ք.Վանաձոր, Մյասնիկյան 12 բ.
2) Ա/Ձ «Մարատ Մկրտչյան»՝ ք. Սիսիան, Ն. Ադոնցի 5/1.
3) ԱՁ «Սամվել Ղուլունց»՝ ք. Գորիս, Մաշտոցի 155/2.
4) «ԿՈՐՈՆԱ ՍՈԼԱՐԵ» ՍՊԸ՝ ք. Երևան, Արտաշիսյան փող., 88/2 շենք (1-ին և 2-րդ հարկեր) և ք. Երևան, Նոր Նորքի 5-րդ միկրոշրջան, Արտեմ Միկոյան փող., 4 շենք.
5) «ԱՐՏԱՎԱԶԴ ՊԵՏՐՈՍՅԱՆ» ՍՊԸ՝ ք. Արմավիր, փող. Երևանյան 17/3.
6) «ՄՇԵՑԻ ԽՈՐԵՆ» ՍՊԸ՝ ք. Արմավիր, փող. Չարենցի 8/6.
7) «Սիրանուշ Գևորգյան Պապիկի» ԱՁ՝ ք. Երևան, Վ. Վաղարշյան փողոց, 15/40,
8) «ԲԵԳՈՎ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ» ԱՁ՝ ք. Երևան, Խորենացի 88:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի ղեկավար Հակոբ Ավագյանին՝ տնտեսավարողներին տեղեկացնել սույն որոշման մասին:
3. Տնտեսվարողի գործունեությունը արգելվում է տեղեկացման պահից:
4. Հայաստանի Հանրապետության ոստիկանության պետ Արման Սարգսյանին՝ ապահովել սույն որոշման 1-ին կետի պահանջների կատարման նկատմամբ ամբողջական վերահսկողությունը:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

Recoverable Signature

X

VERIFIED OCSP 28/03/20 18:42:23 GMT+4

Signed by: AVINYAN TIGRAN 3802890590

Տ. ԱՎԻՆՅԱՆ